Եվրոպական լեզուների և հաղորդակցության ֆակուլտետի գիտական խորհրդի՝

12.06.2026թ. նիստի թիվ 12 արձանագրություն

Օրակարգ.

2025-2026 ուստարվա առկա ուսուցմամբ սպիրանտների ատեստավորում:

ԼՍԵՑԻՆ՝ Ֆրանսիական բանասիրության ամբիոնի երրորդ տարվա առկա ուսուցմամբ ասպիրանտ Նարե Անդրանիկի Շալունցի ատեստավորման հարցը (Ժ.02.07 Ռոմանագերմանական լեզուներ մասնագիտություն):

ԱՐՏԱՀԱՅՏՎԵՑԻՆ՝ Ֆրանսիական բանասիրության ամբիոնի վարիչ Հ.Ջիվանյանը ներկայացրեց Նարե Շալունցի կողմից կատարած աշխատանքը հաշվետու ուսումնական տարում: Նշվեց, որ տպագրության է հանձնված 5 գիտական հոդված, որոնցից երկուսն արդեն հրապարակվել են, իսկ երեքը ընդունվել են տպագրության.

1. «Մարդկային հատկանիշը առածներում ու ասացվածքներում. լեզվի բնորոշման ճանաչողական-փիլիսոփայական դիտանկյուն», Բանբեր Երևանի համալսարանի. Փիլիսոփայություն, Հոգեբանություն, 2026, 17, 1(49), 27-42,
2. «Կերպարանափոխությունը առածային խոսույթում. մարդկային էության բնութագրի լեզվաճանաչողությունը», Բանբեր Հայագիտության հայագիտական միջազգային հանդես, 2026 40 (1), 120-139,
3. Les traits humains à travers le concept de langue dans le discours proverbial (ընդունված է տպագրության Scopus գիտատեղեկատվական շտեմարանում ինդեքսավորված Paremia գիտական ամսագրում, համահեղինակ՝ գիտական ղեկավար Հ. Բաղդասարյան),
4. Խոսքի ու գործի միջև. լեզվականի ու իրականի սահմանը առածային խոսույթում լեզվագործաբանության դիտանկյունից

(ընդունված է տպագրության Բանբեր Եվրասիա համալսարանի գիտական պարբերականում),

5. Կենդանական աշխարհի պատկերը և մարդկային հատկանիշի բարոյախրատական իմաստի կառույցը առածներում (ընդունված է տպագրության Օտար լեզուները մասնագիտական նպատակների համար գիտական պարբերականում):

Հավելվեց նաև, որ հաշվետու ուստարում ասպիրանտն ավարտել է թեկնածուական ատենախոսությունը, աշխատանքը ներառում է չորս գլուխ, որոնք ներկայացնում են ֆրանսերեն առածային խոսույթի ճանաչողական-գործաբանական հայեցակերպի համալիր քննություն (հայերենի զուգադրությամբ):

ՈՐՈՇԵՑԻՆ՝ Հիմք ընդունելով կատարած աշխատանքը՝ ատեստավորել Ֆրանսիական բանասիրության ամբիոնի երրորդ տարվա առկա ուսուցմամբ ասպիրանտ Նարե Անդրանիկի Շալունցին (Ժ.02.07 Ռոմանագերմանական լեզուներ մասնագիտություն): Որոշումն ընդունվեց միաձայն:

Լսեցին՝ Արտասահմանյան գրականության ամբիոնի 2023 թ. առկա ասպիրանտ **Ամալիկ Սնակի Բաղասարյանի** ատեստավորման հարցը:

Արտահայտվեցին՝ բ.գ.թ., պրոֆ. Անուշ Սեդրակյանը նշեց, որ Ամալիկ Բաղասարյանի ատենախոսության թեման է՝ «**Ստեղծագործական երկվությունը Ռոմեն Գարրի (Էմիլ Աժարի) երկերում**», գիտական ղեկավար՝ **բ.գ.թ., պրոֆ. Ա. Սեդրակյան** /Ժ.01.07. «Արտասահմանյան գրականություն»/ մասնագիտությամբ: Հավելվեց, որ Ամալիկ Բաղասարյանի ասպիրանտական ժամկետի վերջին տարին է: Ասպիրանտը ուսումնառության տարիներին հավաքել է պահանջված դասընթացների հարկավոր կրեդիտները, 2026թ. ապրիլին մասնակցել է, Ռումինիայի Արևմտյան Համալսարանում կազմակերպած գիտաժողովին՝ հանդես գալով «Ռոմեն Գարրիի ինքնության կառուցումը ֆրանսիական մշակութային ժառանգության մեջ» զեկուցումով, ընթացիկ տարվա սկզբին տպագրել է մեկ հոդված Երևանի թատրոնի և կինոյի պետական ինստիտուտի գիտամեթոդական հոդվածների հանդեսում: Պահանջված կառուցվածքով ամբողջությամբ ավարտված է ատենախոսական աշխատանքը, որը շուտով կներկայացվի ամբիոն՝ քննարկման:

Որոշեցին՝ Բավարար համարելով կատարված աշխատանքը, 2023 թ. առկա ասպիրանտ Ամալիկ Սնակի Բաղասարյանին երաշխավորել ատեստավորման /Ժ.01.07.«Արտասահմանյան գրականություն»/ մասնագիտությամբ: Որոշումն ընդունվեց միաձայն:

Լսեցին՝ Արտասահմանյան գրականության ամբիոնի 2024 թ. առկա ասպիրանտ **Նաթելլա Լենժետի Հովակիմյանի** ատեստավորման հարցը:

Արտահայտվեցին՝ բ.գ.թ., պրոֆ. Ա. Սեդրակյանը նշեց, որ Նաթելլա Հովակիմյանի ատենախոսության թեման է՝ **«Նոր միֆամտածողությունը Ջան Ափդայկի արձակում»**, գիտական ղեկավար՝ **բ.գ.դ., պրոֆ. Արա Առաքելյան** /Ժ.01.07.«Արտասահմանյան գրականություն»/ մասնագիտությամբ: Նշվեց, որ Նաթելլա Հովակիմյանի ասպիրանտական ժամկետի 2-րդ տարին է, որի ընթացքում ասպիրանտը լրացրել է կամընտրական դասընթացների և պրակտիկայի համար նախատեսված կրեդիտների շեմը և ներկայումս կենտրոնացել է ատենախոսության հիմնական նյութը հավաքելու և շարադրելու վրա: Ատենախոսության 3 գլուխներից, ավարտվում է 1-ինը, ուշադրություն հատկացնելով «Կենտավրոս» վեպի վրա: Շարադրանքի ընթացքում զուգահեռներ են տարվում հեղինակի մյուս վեպերի հետ: Նախատեսվում է 2 գիտական հոդված ատենախոսության թեմայի վերաբերյալ:

Որոշեցին՝ Բավարար համարելով կատարված աշխատանքը, 2024 թ. առկա ասպիրանտ Նաթելլա Լենժետի Հովակիմյանին երաշխավորել ատեստավորման /Ժ.01.07.«Արտասահմանյան գրականություն»/ մասնագիտությամբ: Որոշումն ընդունվեց միաձայն:

Լսեցին՝ Արտասահմանյան գրականության ամբիոնի 2025 թ. առկա ասպիրանտ **Գոհար Նաիրիի Գևորգյանի** ատեստավորման հարցը:

Արտահայտվեցին՝ բ.գ.թ., պրոֆ. Ա.Սեդրակյանը նշեց , որ Գոհար Գևորգյանի ատենախոսության թեման է՝ **«Եվրոպական առասպելաէպիկական ավանդույթը և Ջոն Ռ.Ռ. Թոլքինի տեսական** և վիպական **ժառանգությունը»** գիտական ղեկավար՝ **բ.գ.դ., պրոֆ. Արա Առաքելյան** /Ժ.01.07.«Արտասահմանյան գրականություն»/ մասնագիտությամբ: Ասպիրանտը ուսումնառության 1-ին տարում պարտադիր դասընթացներից հավաքել է 30 կրեդիտ, պատրաստ է ատենախոսության 1-ին գլուխը: Հիմնվելով Թոլքին հեղինակի վիպական և

առասպելաբանական ստեղծագործությունների ուսումնասիրության վրա հավաքվում են աշխատանքի 2-րդ գլխի նյութերը, պատրաստվում է հոդված գիտական ամսագրերի համար:

Որոշեցին՝ Բավարար համարելով կատարված աշխատանքը, 2025 թ. առկա ասպիրանտ Գոհար Գևորգյանին երաշխավորել ատեստավորման /Ժ.01.07.«Արտասահմանյան գրականություն»/ մասնագիտությամբ: Որոշումն ընդունվեց միաձայն:

Լսեցին՝ Արտասահմանյան գրականության ամբիոնի 2025 թ. առկա ասպիրանտ **Մարիամ Ռոբերտի Թորոսյանի** ատեստավորման հարցը:

Արտահայտվեցին՝ բ.գ.թ., պրոֆ. Ա.Սեդրակյանը նշեց, որ Մարիամ Թորոսյանի ատենախոսության թեման է՝ **«Հիմարների գրականության» դասական ավանդույթը և 20-րդ դարի անգլիալեզու վեպը»**, գիտական ղեկավար՝ բ.գ.դ., **պրոֆ. Արա Առաքելյան** /Ժ.01.07.«Արտասահմանյան գրականություն»/ մասնագիտությամբ: Նիստի ընթացքում խոսվեց, որ ուսումնառության 1-ին տարում ասպիրանտը մասնակցել է 8 դասընթացի և հավաքել 27 կրեդիտ 32-ից: Պատրաստում է տպագրության Ջորջ Բեռնարդ Շոուի ««*Կոտրվող սրտերի տունը*» և «*Հիմարների նավը*» գրական ավանդույթը» վերնագրով գիտական հոդված, 2026 թ. մայիսի 8-9-ը մասնակցել է Հռոմի Science Cite հարթակում տեղի ունեցած գիտաժողովի հեռավար աշխատանքներին, շարունակում է հավաքել և խմբավորել ատենախոսության թեմայի հետ առնչվող նյութերը

Որոշեցին՝ Բավարար համարելով կատարված աշխատանքը, 2025 թ. առկա ասպիրանտ Մարիամ Թորոսյանին երաշխավորել ատեստավորման /Ժ.01.07.«Արտասահմանյան գրականություն»/ մասնագիտությամբ : Որոշումն ընդունվեց միաձայն:

Եվրոպական լեզուների և հաղորդակցության

ֆակուլտետի դեկանի պ/կ և գիտական խորհրդի

նախագահ, բ.գ.թ., դոցենտ՝ Ս.Հ.Յաղուբյան

Գիտական խորհրդի քարտուղար,
բ.գ.թ., դոցենտ՝ Մ.Գ. Դալալյան
12.06.2026 թ.